ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ << ԱԽՈՒՐԻԿԻ ԼԻԼԻԹ ՄՍՈՒՐ - ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրիկի Լիլիթ մսուր - մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար։

1. Մրցույթին մասնակցելու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի՝

1) բարձրագույն կրթություն.

2) կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով ստացած նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր),

2. Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.

5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.

6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

3. Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝

1) «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված կարգով չի ստացել նախադպրոցական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիր.

2) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

3) դատական կարգով զրկվել է մանկավարժական կամ վարչական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

4) ունի այնպիսի հիվանդություն, որը կարող է խոչընդոտել մանկավարժական կամ վարչական գործունեության կատարմանը.

5) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով մարված կամ վերացված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

6) ներկայացրել է փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի 12-րդ կետով սահմանված պահանջներին, լրիվ չեն կամ թերի են.

7) 65 տարին լրացած քաղաքացիները:

4. Քաղաքացիները ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմ (ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Գյումրու խճուղի 42, երկրորդ հարկ ,13 սենյակ) անձամբ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում.

2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.

3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.

4) ինքնակենսագրություն.

5) անձնագրի կամ նույնականացման քարտի, բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի, արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի, նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման հավաստագրի բնօրինակները և պատճենները.

6) տեղեկանք մշտական բնակության վայրից.

7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)։

Հիմնական աշխատավարձի չափը՝ հաստատված հաստիքացուցակին համապատասխան։

Քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնում են անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով։ Քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում։ Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10:00-ից մինչև 13:00-ն և 14:00-ից մինչև 17:00-ն, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից։ Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2025թ. օգոստոսի 18-ը ներառյալ՝ մինչև ժամը 17:00-ն։

Մրցույթը կկայանա 2025 թվականի սեպտեմբերի 2-ին, ժամը՝ 11:00-ին, Ախուրյանի համայնքապետարանում (հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Գյումրու խճուղի 42, երկրորդ հարկ ,3 –րդ հարկ, նիստերի դահլիճ)։

Մրցույթին մասնակցել ցանկացողները իրավական ակտերի ցանկը ստանալու համար կարող են դիմել Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմ (հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Գյումրու խճուղի 42, երկրորդ հարկ ,13 սենյակ հեռ. (0312) 70885)։

«Ախուրիկի Լիլիթ մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ- ի հասցեն է՝ ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրիկ 1 -ին փողոց, 14 մանկապարտեզ։